ԹՒ. ՏԱՐԻ 3420 (Ն. Տ.) 19 ՅՈՒԼԻՍ 1895 — 7 ՅՈՒԼԻՍ 1895 — 26 ՄՈՒՀԱՐՐԷՄ 1313 — ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՉ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍ ՕՐԱԳՐԻ Գալաթիա, Կ. Պոլիս

درعلیه غلطه آره‌وك غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐՇԱԼՈՅՍ ՕՐԱԳԻՐ
Քաղաքական եւ Գրական

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան դրամական արժէք	130
» »	Վեցամսեայ » »	75
» »	Եռամսեայ » »	40
Օտար երկիրներէ	Տարեկան Ֆրանկ	56
» »	Վեցամսեայ »	28
Ընտիր թուոյթի փոյթ մասնաւոր տպագր.	Տարեկան Օսմ. Ոսկի	2
Գաւառաց թղթատարի ծախք միօրինակ	Ղրուշ	50

Խմբագրութեան ուղղուած նամակ կամ ապրանք եւ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

ԾԵՐՈՒՆԻ ՄԻԱԲԱՆՆԵՐ

Հինգ վեց տարիներու հեռապատկերի մը մէջէն որոշակի չեմ յիշեր դէմքն այն պեւոր վարդապետին որուն մահուան լուրը հաղորդեցին Երուսաղեմէն։ Ութսունը մէկ տարեկան է եղեր, միաբանութեան երիցագոյն անդամը կամ երիցագոյներէն մէկը, որ իր ծերութեան օրերը կանցուցէր վանքի կամարներուն տակ, աղօթքով ու հանգիստով։ Իր մասին հաղորդուած կենսագրական հակիրճ ծանօթութիւնը մէջ սա միայն կար ուշագրաւ, թէ Ադրիանուպոլսեցի Պօղոս Պատրիարքին աշխատակցեր է անոր կրօնական մէկ հեղինակութիւնը, Հրեշտակապետի վանքին տեսչութիւնը մարեր է քառորդ դարու միջոց մը, ու քանի մը շինութիւններ կատարեր է, մանաւորապէս գեղեցիկ տեսչարանով մը օժտելով մայրապետանոցը։

—Այսքան արդիւնքը քիչ չէ՞, քառասունըհինգ տարուան վարդապետի մը ու վաթսուն տարուան միաբանի մը գործունէութեան համար, կը հարցուցէր մէկը որ կը հետաքրքրուի եկեղեցականներուն։

Հեռուէն դատելով, այսպէս կրնայ մտածուիլ, բայց Երուսաղեմի վանականներուն պէտք է տարբեր տեսակէտով նայիլ. անոնց հոգեւոր ասպարէզը չի պատշաճիր գաւառացի ու քաղքենի վարդապետներուն առջեւ գծուած սահմանին։ Ս. Յակոբայ հոյակապ վանքը՝ իր յարակից ուխտատեղիներով ու մենաստաններով՝ յարատեւ հոգածութեան մը ու բազմապիսի աշխատութեան մը կը կարօտի, որուն միայն նուիրելով իր կեանքը՝ եկեղեցական մը խղճի կատարեալ հանդարտութեամբ կրնայ բոլորել զայն։ Եւ կերեւի թէ ասոնցմէ էր Մարաշցի Տ. Վարդան վարդապետ, տիպար մը հին եկեղեցականի, քիչ բան ուսած, հաղիւ իրենքաւելու չափ, բայց անձնուէր և աշխատելու պատրաստակամ, որ ուսեալի մը չափ կրնայ օգտակար հանդիսանալ Երուսաղեմի պարիսպներէն ներս։ Ուխտաւորները, և մանաւորապէս անոնք որ գիտել եւ ուսումնասիրել կ'ուզեն, շատերու հանդիպած են անոնցմէ. երիտասարդը՝ կորովի և աշխոյժ, գիշերը ցերեկին խառնած, հսկելով մարդուի մը կամ վանքի գործերուն վրայ, տարէցը իր հոգեւոր պաշտամունքներէն դուրս՝ վարչական գործերով զբաղած, ծերունին՝ իրեն համար առնելի ծառայութիւններ ստանձնելով, և ամենքը սիրայօժար ու գոհունակ։ Նահապետական երեւոյթ մը կայ այդ միաբանութեան վրայ, ուր եղբայրակցութիւնը իր ամենէն անկեղծ իմաստովը կը մնանուի. ուր եպիսկոպոսը սարկաւագին սեղանակից կ'ըլլայ, ուսեալը թերուսին հետ կ'աշխատի, ուր պարտականութեան գաղափարը կը մղէ զամենքը։ Գիտական միաբանի մը խուցին մէջ հաճոյքով կը տեսնես գրասեղանը, մատենադարանը. ուրիշ խուց մը, ուր ալեւոր միաբան մը՝ ցած բաղմոցին վրայ, ժամագիրքը ձեռքը, անոր ընթերցման մէջ կը գտնէ իր մտաւոր ու հոգեկան բոլոր սնունդը, նը. ուազ հաճոյք չես զգար. ան ալ իր վարժուած ու ընտանած եղանակով ժամանցի մը կը նուիրէ իր հանդիստ ժամերը։ Եկեղեցիէն դուրս, իր պաշտօնին գլուխէն դուրս, իւրաքանչիւրը ունի զբաղում մը, նիւթական կամ մտաւորական։ Խուցեր կան որոնք պրդտիկ թանգարանի մը կը նմանին. առանց տերը հաւաքած է հնութեան նշխարներ, յիշատակարաններ, խնամով պահած, տեղաւորած է, ծանօթագրութիւններով. ուրիշ մը, հեղինակ կամ թարգմանիչ, իր երկերովը կը զբաղի. արհեստաւորներ կան մինչեւ իսկ, օրինակ Մարաշցի վարդապետը որ դերձակ է եղեր։ Գեղագրութեան ու գծագրութեան, և գեղարուեստի ճաշակին հետ դերձակութիւն։ Հեգնելու բան մը չիկայ։ Ընդհակառակը։ այդ մեծ ընտանիքին վրայ, որ միաբանութիւն կը կոչուի, գաղափար ունեցողները գիտեն թէ արհեստաւոր վարդապետն ալ իր յարգը ու պէտքը ունի շատ անգամ։ քրիստոնէավայել հեզութեան մը օրինակը տալէ զատ, կեանքի իրական պէտքերուն ըմբռնումը ցոյց կուտան։ Լատին միաբանութիւններուն մէջ չիկա՞ն «եղբայրները» որոնք իրենց անձը նուիրած են ձեռագործ աշխատութիւններու և մինչեւ իսկ առանին ծառայութիւններու որոնք անհրաժեշտ են վանքերու մէջ իսկ։

Քիչ անգամ առիթ կը ներկայանայ որ խօսինք Երուսաղեմի միաբանութեան այս խնամարկեալ գաւակարդին վրայ։ Վարդան վարդապետին մահը պատեհութիւն կուտայ անոնց ալ օգտակարութիւնը շեշտելու, իրենց համեստ ու աջօղուած շրջանակին մէջ։ Իրաւ, տրխուր բան է վաթսուն, եօթանասուն տարի փակուած մնալ վանքի մը կամարներուն տակ, հան անդունել երիտասարդութիւնը, ծերութիւնը, անընդհատ գործելով, աշխատելով, անշուք ու մոռցուած. բայց աւելի տխուր պիտի ըլլար ողջ մնացողներուն համար՝ եթէ չի տեսնէին իրենց հոգեւոր եղբօր յիշատակին նուիրուած քարի մը տողեր։

Տ.

ՀՈՎՈՒԻ ՄԸ ՎԵՐՋԻՆ ԿԱՄՔԸ

(ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

Վաթսուն եօթանասուն տարիներու բեռան տակը ընկճուած՝ միակին, ոսկրուտ դէմքով, փոխ մարմնով, իր գաւազանին կրթնած կը տեսնէիք զինքը։ Ամեն առաւօտ երբ գիւղէն դուրս կ'ելնայինք առողջ օդ ծծելու, գիւղի բարձրաւանդակին վրայ, ոչխարաց խումբն իր առջեւ, մեզի կը հանդիպէր. սովորական բարեւներ փոխանակելէ յետոյ կը հեռանայինք, և ինք, միշտ մելամաղձոտ, միշտ տխուր, գամուած կը մնար իր երամակին առջեւ. և երբ յոգնէր, կընկողմանէր մարմանդերու վրայ և իր գաւազանով կոկորդն ինքնաբերաբար դուրս կը թողէր խոպոտ և թրթռուն ձայն մը որ արգահատանքի տպաւորութիւն կը թողուր։ Արդեօք ինչպիսի անցեալ մը ունեցած էր, և որ տեղէն կուգար այդ թշուառութեան ուրուանկարը. մեզ անծանօթ էր. միայն կը պատմուէր թէ ոտքը հնամակէն թափառուած կեանք մը ունեցած էր, ամուսնացած, զաւակ մը հայր եղած էր, թէ բնութեան բանդիչ հարուածը գրկած էր զինք իր տնէն և զաւակէն. այն օրէն ուրախութիւն կուտայ անոնց ալ օգտակարութիւնը շեշտելու, իրենց համեստ ու աջօղուած շրջանակին մէջ։ Իրաւ, տրխուր բան է վաթսուն, եօթանասուն տարի փակուած մնալ վանքի մը կամարներուն տակ, հան անդունել երիտասարդութիւնը, ծերութիւնը, անընդհատ գործելով, աշխատելով, անշուք ու մոռցուած. բայց աւելի տխուր պիտի ըլլար ողջ մնացողներուն համար՝ եթէ չի տեսնէին իրենց հոգեւոր եղբօր յիշատակին նուիրուած քարի մը տողեր։

Տ.

ՏԻՏԻՆ ՔԱՌՎԱԼՕ

Ֆրանսայի հին ու անուանի երգչուհիներէն մէկը մեռաւ այս օրերս, տիկին Քառվալօ, որ երգելու արուեստը իր կատարելագործութեան հասուցած էր։ Բարիզեան թերթերը իր արժանիքը անոր մէջ կը գտնեն մանաւանդ, որ փոխանակ օտար երկիրներ չրջելու՝ ուր դիւրաւ պիտի կրնար հարստութիւն դիզել մեծ օբէռաներ երգելով, ինքը չատացաւ իր հայեցեալ թաղակովը, բոլորովին ֆրանսական արուեստին նուիրելով ինքզինքը ու իր երկրին մէջ փայլեցուցնելով իր տաղանդը։ Իր եւրաղը եղած էր ինքնատիպ կերպով ստեղծել այն դերերը զորս կը կատարէր, ամեն մեծ ադիսքներու նման որոնք կենդանութիւն մը կուտան հեղինակին ու երգահանին խէտլին։ Երբ Կունօ առաջին անգամ բեմի վրայ տեսաւ իր երեւակայած Մառկոթիը։ հարիւր անգամ աւելի չքնաղ գտաւ զայն քան իր երազածը և կարծեց որ. ինչպէս ինքն ինկ պատմած է, իր արձանը կենդանութիւն առած էր ուրիշ կեանքով մը քան զոր չէր կրցած տալ անոր իր հանճար։ Տիկին Քառվալօ (Օր. Միլլան) Քոնսերվատորարի ազակերտուհի էր և իր սկզբնաւորութիւնն Օբեռա-Կոմիքին մէջ ըրած։ Պ. Քառվալօի հետ ամուսնանալէն եւեթը, որ թատրոնի տնօրէն է, իր համբաւը փայլեցաւ հեռագիտէ և Օբէրայի մէջ իր երեւումը անհուն խանդաղատանք առաջ կը բերէր միշտ։

ՆԱՄԱԿ ՍԱՆ ՖՐԱՆՇԻՍԿՕԷ

ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԳԵՆԴԱՆԻՔ

Աւստրալիա իր հանքաց նման, կենդանեաց կողմէ ալ հարուստ և բազմատեսակ է։ Աւստրալիա գրեթէ 110 տեսակ կենդանիներ ունի, որոց գլխաւորն է քանկուրու ըսուած չորքոտանին, որոյ տեսակը միայն Աւստրալիոյ մէջ է։ Քանկուրուն հանդարտ, արագավազ և թուխ կենդանի մ'է և կատաղի, շունի նման կրնայ առտընին անասուններուն պատկանիլ։

Շատեր քանկուրուն առնով կ'ընտանեցուցին մարգկային սովորութեանց, ինչպէս ըմբշամարտ խաղալու, ոտնարշաւ ընելու, ևն։ Ըմբշամարտ քանկուրու անուամբ զարմանալի քանկուրու մը ոչխարհիս շորս կողմը պտըտցուցին մէկ քանի տարի առաջ և այդ անհուն չորքոտանին իրեն տէրերուն բաւական մեծ գումարներ վաստկցուց։ Քանկուրուն իր առջեւը տեսակ մը մորթեայ գրպան ունի, ուր կը պահէ ձագերն։ Իր մորթը և մազը շատ պատուական են և բաւական արժէքաւոր։ Ասկէ ի զատ կան հաւ ուալապի, բօսամ, սարեկ, ուօմպաթ, վայրի արջ, վայրի շուն կամ տինկօ, Թասմանեան վագր կամ սատանայ, փակ, Ղղիկ, մրմնտարիւ, որոնք Աւստրալիոյ հողին սեպհական անասուններն են։ Նոր-Հոլ. Կալէսի Բրիգադիրին մէկ տեսակը քանկուրուի պատկերն ունի, որով կը նշմարուի թէ այդ կենդանին Աւստրալիոյ յատկանիշն է։ Նոյն Աւստրալիոյ թռչունք շատ թուաւոր են, պլեսուրներ սեւ կարապ։ Էմիւ, Մոզոս հնդկական, քոմաթեաշուն, լորամարգի, փէլիկան, թութակ։ Նոյնպէս Աւստրալիան ջուրերն ալ ասատ են ամեն տեսակ ձուկերով։ Ոստրէներն և խեչափառներն անուանի են, որոնց համը չեմ կարծեր որ ուրիշ ոչ է երկրի ոստրէներ ունենան։ Բայց կենդանեաց, ձկանց, պտղոց, բանջարեղինաց համը երբէք Հին Աշխարհի մանաւանդ Ասիոյ ճաշակաց չի կրնար հաւասարիլ։

Զանազան տեսակ սողուններ, ինչպէս նաև թռչնաւոր օձ, անպակաս են։ Ամենապատահի կենդանիք են ձի, արջառ, ոչխար, խոզ, այծ, և ամեն տեսակ հաւեղէն ու թռչնեղէն։ Նապաստակներն ու ճագարներն այնչափ շատ են որ չնչին գումարով մը կը գնուին։ Ոչխարներու կողմանէ Աւստրալիա այնչափ հարուստ է որ ամեն տարի 20,000,000 սթերլին արժողութեամբ բուրդ կ'արտադրէ և Եւրոպայէն ամեն տարի բազմաթիւ վաճառականական յանձնակատարք կը փութան հոս մեծ գնումներ ընելու կանուխէն և լաւ տեսակէն ընտրելու դիտաւորութեամբ։

ԲԱՆՋԱՐԵՂԷՆ

Աւստրալիոյ ծառերուն գլխաւոր տեսակն է Իւքալիպթը (Eucalyptus) որոյ նիւթը բժշկութեան այնչափ մեծ օգնութիւններ մատուցած է։ Սոցա ծնդաքաղը բառին բուն նշանակութեամբ Աւստրալիան է մանաւանդ Արեւմ. Աւստրալիոյ ծառերը որոնք յաղթ և բազմաճիւղ են և որոց նիւթը ամենէն աւելի զօրաւորն է։ Նոյնպէս կան խիտ ծառ. մոյրի, սօսի, և այլ բազմատեսակ ծառեր որոյ համար մանրամասն տեսակներուն վրայ խօսիլ երկար կ'ելլայ։ Անուանի է կապոյտ խեժատ ծառ մը որ 480 տարի բարձրութիւն ունէր և որ մէկ քանի տարի առաջ տապալեցաւ Վիքթորիոյի Հելոիլ գիւղին մօտ։ Կանգուն վայրի տարածութիւնը տատ բիչ է և ներատանութեան պէտք կը տեսնուի։ Կամարջներու սալայատակներու, երկաթուղեաց ձողաններու մասին Աւստրալիոյ ճարտարապետներ ասոր խոշոր մասը գործածութեան ներդաշնակութեան մասին, բնդհանրապէս անոր շարժանիներն արդյունաւոր։ Այս հիւանդութիւնը առաջ կուգայ չափազանց ուտելէ, խմելէ կամ գործելէ, վիշտ, անձկութեան կամ վարանք, կամ որ և իցէ տկարութիւնն մը կամ յանդարձական նեղութիւնն մը որ որոնն չափ զանց գործել կուտայ։

Ամփոփելու որոշ բարեխմման հիւանդութիւնը յանդարձ կուգայ, իբրեւ հեռաւոր վիրը յիշատաններէն մէկուն, և ախտանիշերն են՝ ճնչում որոնի վրայ, ցաւ, որագ և վրդովիլ շնչառութիւն, գլխու պտոյտ և նուազում։ Ախտաւորը նաեւ կ'ունենայ չնչահեղձ ըլլալու զգացում մը որ գնուելայ պատկած դիրքի մէջ։

Ինչպէս արդէն բուեցաւ, ախտը վախնալու բան մը չէ՝ եթէ դարմանուի կանուխ և ըստ պատշաճի։ Հարկաւ, առնելու առաջին քայլն է վարատել որչափ կարելի է՝ զրգռման ամեն առիթ։ Թէյը, խանաւէն, ծխախոտը, ոգելից ըմպելիները, ևն., պէտք է բոլորովին արգիլել։

ՍՈՐՏԻ ԲԱՐԵԽՍԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Սորտի հիւանդութիւն կարծուած շատ տկարութիւններու առեն, հիւանդը բաւական տխտանիշներ կը ցուցնէ վախցնելով այնպիսիները որ բուն այդ հիւանդութեան սովորած չեն։

Իր կեանքը սորտի հիւանդութիւններն ուսումնասիրելու նուիրող անձ մը ըսած է թէ սորտի հիւանդութիւն ունեցողը դուն ուրեք կը գտնայ թէ ունի այդ հիւանդութիւնը։ Այս տեսակ հինցած ախտերը գրեթէ անպայմանակ կերպով գաղտագողի կը գործեն, կամ գէթ իրենց ախտանիշները չեն ցուցներ ուշադրի թէ ցաւին կեդրոնն ուր է։ Այսու ամենայնիւ կայ որոշ դիտութիւն մը որ այդ գործարանին տարտութեան բոլոր ախտանիշերը կը յայտնէ, և որ գրեթէ միշտ կը շինուի սորտի հիւանդութեան աւելի ծանր ձեւերուն հետ, բայց որ եթէ ըստ պատշաճ, և շատով զգաստանի, կը բուժուի։

Սորտի բարեխումը կամ գրգռուած ախտ՝ անատարակոյս ցաւին ծագումն է։ Ցաւ բարձրէ է աւելի կամ նուազ անկանոնութիւն որոշ գործարանի ներդաշնակութեան մասին, բնդհանրապէս անոր շարժանիներն արդյունաւոր։ Այս հիւանդութիւնը առաջ կուգայ չափազանց ուտելէ, խմելէ կամ գործելէ, վիշտ, անձկութեան կամ վարանք, կամ որ և իցէ տկարութիւնն մը կամ յանդարձական նեղութիւնն մը որ որոնն չափ զանց գործել կուտայ։

Ամփոփելու որոշ բարեխման հիւանդութիւնը յանդարձ կուգայ, իբրեւ հեռաւոր վիրը յիշատաններէն մէկուն, և ախտանիշերն են՝ ճնչում սորտի վրայ, ցաւ, որագ և վրդովիլ շնչառութիւն, գլխու պտոյտ և նուազում։ Ախտաւորը նաեւ կ'ունենայ չնչահեղձ ըլլալու զգացում մը որ գնուելայ պատկած դիրքի մէջ։

Ինչպէս արդէն բուեցաւ, ախտը վախնալու բան մը չէ՝ եթէ դարմանուի կանուխ և ըստ պատշաճի։ Հարկաւ, առնելու առաջին քայլն է վարատել որչափ կարելի է՝ զրգռման ամեն առիթ։ Թէյը, խանաւէն, ծխախոտը, ոգելից ըմպելիները, ևն., պէտք է բոլորովին արգիլել։

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼԻ»Ի (24)

ԺԻԻԼ ՏԸ ԿԱՍԹԻՆ

ԲՕԼԻՆ ՏԸ ՄԵՐԻԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Կուզէր վրէժ լուծել անկից, իր քաջածին հարիւրապատիկը քաշել տալ անոր։

Երջանիկ էր հան իր առջեւ բռնելուն զայն, դղրահար, սիրտը պատռտուած՝ զաւկին տանջանքներէն։

Զկրնալով կնոջ ձեռքէ, վանդի չէր կրնար անոր սիրտն վանել Կիին յիշատակը, մայրը հարուածած էր...

Շատ անգամ փորձած էր զգեստել կուռքը, փճացուցնել մեռեալին յիշատակը, որ իրեն համար բոլոր կենդանիներէն աւելի նեղացուցիչ, աւելի սոսկալի էր, բայց ի զուր։

Քամահուած հակառակորդին ուղղած ամեն մէկ նախատինք, ամեն մէկ արհամարհոտ խօսք կարծես աւելի կը գրգռէր Բօլինի սէրը...

Մարքիզը զգրեցուցած էր այս պայքարը... ամուլ, ապարդիւն պայքար, և տղուն վրայ կը յարձակէր,—ինչ որ աւելի յաղոդած էր, վանդի կինը դուրս հանած էր իր ցաւութենէն, իր անտարբերութենէն։

Բօլին սրտէն զարնուած էր...

Կը տառապէր...

Կը արտնջար...

Եւ ինք կը ճառագայթէր, վանդի վրիժառութիւնը կը սկսէր։

Տեսակ մը կատաղութեամբ, վայրագ ուրախութեամբ ըսած էր անոր սա խօսքը.

—Քեզ չարչարելու համար...

Այս ցուրտ չարութեան առջեւ ապշած մնացեր էր Բօլին։

Մարքիզը չարայարեց.

—Քեզ չարչարելու համար... ինծի քաշել տուածներուդ մէկ հազարերորդ մասը քեզի քաշել տալու համար։

Բօլին բողոքեց.

—Ը՞ս։

—Այո, դուն, քեզ տեսնալէս, քեզ ճանչնալէս, քեզ սիրելէս ի վեր... վանդի երկար ատեն կայ որ կը սիրեմ քեզ... միւսին մահէն երկար ատեն առաջ... կը սիրէի քեզ երբ կապրէր... կը սիրէի քեզ, և կը տեսնէի որ ակնարկներդ լեցուն էին անով... երբ դէպ անոր ծռած տեսնէի քեզ, կը գուշակէի այն խօսքերը զորս քեզի կ'ըսէր և անոնք զորս դուն կը պատասխանէիր... Բայ կար աչքերուդ մէջ, համբոյրներդ շուրթերուդ վրայ, և ես կը նախանձէի անոր վրայ, և իմ մէս կը չորնար վիշտէ և նախանձէ... Օ՜հ, սիրուիլ այդպէս, կը մտածէի, սիրուիլ այդպէս։

«Եւ ամուսնանալնէ ի վեր ի զուր կը յուսամ, ի զուր կը սպասեմ սիրային խօսքի մը, նայուածքի մը... Ոչինչ... Ոչինչ... Իրաւամբ մեռցնելու է եղեր միւսը...

Բօլին երեսը նայեցաւ։

Կարծեց թէ մարքիզը կը խենդենար...

Ի՞նչ կ'ըսէր։

Բայց անիկա շարունակեց, առանց նշմարելու իր ներշնչած սոսկումը, շարայարեց տեսակ մը արհամարհանքով.

—Վանդի ես մեռցուցի զայն, ե՛ս։

—Թշուառակա՜ն, մրմնջեց Բօլին։

Միւսը կրկնեց.

—Ե՛ս...

Մանկամարդ կինը կարծեց թէ անիկա կը պարծենար, թէ ինքզինքը կամբաստաներ զինքն արհամարհելու, զինքը չարչարելու համար։ Եւ որովհետեւ մարքիզը տեսաւ որ իր ամուսինը իր սիրահարին սպանիչն ըլլալու գաղափարը աւելի կը սաստկացուներ անոր ահռելի տանջանքը, ըսածն կատարեց.

—Այո, այո, ես մեռուցի։

Եւ պատմեց ոճիրը մանրամասնութիւններն յիշելով. բայց Բօլին դարձեալ կը տարակուսէր։

—Եւ ինչո՞ւ մեռուցիք զայն։

—Վանդի ձեզ կը սիրէի...

Աչքերը մարքիզին վրայ բարձրացան երբ այս խօսքերը կարտասանէր, և անոր նայուածքին մէջ նախանձու և ատելութեան անանկ արտայայտութիւն մը կար որ միտքը լուսաւորուեցաւ... ա՛լ չմարանեցաւ։ Այդ նայուածքն արիւն ու ոճիր կը հոտէր։

Այն ատեն Բօլին անհուն սարսափով մը համակուեցաւ։ Աչքերը խոշորցան, և սոսկումի ճիչ մը խուսափեցաւ սեղմուած կոկորդէն, ահաբեկումէ ճնչուած կուրծքէն.

—Մարդասպա՛ն, մարդասպա՛ն։

Եւ դուռ կուզուզուր օգնութիւն կանչելու համար։

Մարքիզը ուժգնօրէն բռնեց անոր թեւը.

—Ո՞ւր կ'երթաք։

—Ցայտնել ձեր ոճիրը...

—Ո՞վ պիտի հաւատայ... Պիտի ուրանամ և պիտի ըսեն թէ խենդ ես դուն։

Բօլին բաղուկները գալարեց։

—Բայց սոսկալի՛ բան է։

—Մտանեցէք դիս, շարայարեց մարքիզը, և ձեր զաւակը պիտի ըլլայ իրմէս մարքիզին, մարդասպանին, թիապարտին զաւակը...

Կինը անոր երեսը նայեցաւ.

—Իրաւ է։

Ասիկա չէր մտածած։

—Բայց. ըսաւ. ամենուն պիտի պատմեմ թէ ձեր զաւակը չէ, թէ անոր ու ձեր միջեւ ամենաչնչութիւն չիկայ։

—Օրէնք կայ... Օրէնքը որ կը տոիպէ զայն իմ անունս կրել այսուհետեւ... այս արհամարհուած, անպատուուած անունը։ Գացէք տիրմոյ ու ամբոխ ծածկեցէք ձեր զաւկին անունը, ամենուն յայտնելով ձեր յանցանքն ու իմ ոճիրս։

Բօլին ծռեց գլուխն ու հակաբ իր անզօրութիւնը։ Կիին վրէժն իսկ լուծել արգիլուած էր իրեն... Կը մնար հան ապշահար, նոյն տեղը, աչքերը չիրնալով գատել այս մարդուն, այս ոճրագործին սոսկալի տեսիլքն, որ բոլորովին ծածկուած կերեւար իր սիրահարին արիւնովը և որ կը պարծենար իր սպանութեան վրայ։ Բօլին կերեւակայէր թէ դղեակն արիւնլուայ էր, թէ արիւնը կը վազէր ձեղունէն ու պատերէն... Սրունգները կը դանդաղէին։ Կարծես մահաչչուկ, անագորոյն մշձաւանջի մը մէջ կը տեսնէր ու կը լսէր... որ կը ջախջախէր զինքը...

Վերջապէս շարժում մը բրաւ։ Ոտքերը կրցաւ կորել գետնէն և քայլեց դէպ ի դուռ մեքենաբար, խոյս տալու համար այդ մարդէն։

Սա չէր բռներ զինքը...

Շուրթերուն վրայ ունէր միտ իր ժպիտը, այն հեգնոտ, գեհենապարտ ժպիտը ուր ծաղրանք ու գոհացած տեսութիւն կար։ Մնաց որ ամենեւին երկիւղ... Հիմակ ազէկ գիտէր որ չպիտի խօսէր... Բնաւ խղճի խայթ... Վրէժ կը լուծէր, անողորմ, անազորոյն վրէժ, որմէ հաճոյք կը զգար իր անիծեալ ոգին։

Բօլին դուրս ելաւ անձայն, գանգաչուն, ջախջախուած, կքելով իր վրայ խոնող պատժին ծանրութեան տակ զոր արդար կը գտնէր, վասն զի կը պատժէր զինքը Կիին յիշատակը շլացուցիչն։

Գուցէ երբէք ասկից սոսկալի կացութիւն չէր տեսնուած... Սպանուած էր սիրած մարդը, և միացած էր այն մարդուն որ վատաբար մեռուցած էր պաշտելի էակը. ցկեանս անոր կապուած էր. անոր անունը կը կրէր. և իբր թէ այսչափը չի բաւէր. իր զաւակը. սպանուած մարդուն զաւակը օրինաւորապէս եղած էր մարդասպանին զաւակը։ Ձեր կրնար Կիին վրէժը լուծել, անպատուել մարքիզը, առանց անուանարկելու իր զաւակը, Կիին զաւակը...

Կը տեսնէր բոլոր այս բաները։ Կը գուշակէր, կը զգար և կը քաշկռտուէր այս չարաբախտութեան բեռին տակ որ այնքան ծանրապէս կը հեծնար իր բեռին վրայ։

Ի՞նչ պիտի ընէր։

Չէր գիտեր...

Նախ խոյս տալ...

Ամենէն առաջ փախչելու էր։

Ա՛լ չէր ուզեր տեսնել այդ մարդը։

Խոյս տալ հետ առնելով զաւակը, վասն զի չէր ալ ուզեր որ զաւակը նորէն տեսնէ զայն, նորէն անոր հետ յարաբերութեան մէջ գտնուի։

Բայց իրաւունք ունէ՞ր հետ տանելու զայն։ Ձէ՞ր կրնար մարքիզը ետ առնել, քանի որ Մարք իր զաւակն էր եղած օրէնքին համեմատ։

Այս մտածումէն բոլոր արիւնը սառեցաւ, բայց սրտապնդեցաւ... մարքիզը չպիտի համարձակէր... պիտի փախնար որ Բօլին չելլայ խօսի, ամեն բան յայտնէ։

Ցնծայ չէր սիրեր ոգան։

Ի՞նչ պիտի ընէր զայն։

Անկից և իրմէ ազատելուն չատ ուրախ պիտի ըլլայ։

Ա՛լ բան մը ուզելիք չունէր անոնցմէ։

Հիմակ վրէժը լուծած էր։

Բիչ մը չանդ առաւ։

Զաւակն իրեն պիտի մնար։

Մարքի սենեկին դուռն հասած էր։ Բացաւ... Անհամբեր էր ձգելու այդ տունն որուն սարսափածը կայրեր զինքը։

(Շարունակելի)

Կ. ՊՈԼԻՍ, 7,19 ՅՈՒԼԻՍ, 1895

Քաղաքական կացութիւն

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ Յ՝ԱՆԳԼԻԱ

Աւասիկ երեկ իրիկունէ ի վեր եկած հեռագիրք Անգլ. Ընտրութեանց վրայ.

ԼՈՆՏՈՆ, 17 Յուլիս.—Յարգ ընտրուած են

Միութենականք	254
Ազատականք	59
Փառնէլեանք	6
Հակափառնէլեանք	29
Իռլանտացիք	35
Գործաւորական	2
	350

Միութենականքը չահեցան 44 տեղ., Ազատականք՝ 10։ Ընտրուած են Սրբ Զարլզ Տիլք, արմատական. Պառոն Ռաչիտ, միութենական. Պ. Ճէրլբա Պարֆուր, նախարար Իռլանտայի. Սրբ Ճարճ Թրիվիլիըն, ազատական նախորդ նախարար, քեռորդի Լորա Մաքօլէյի, և Պ. Ճոն Ռէյմոնտ, պետ Փառնէլեան կուսակցութեան։

ԼՈՆՏՈՆ, 18.—Յարգ ընտրուած են

Միութենականք	270
Ազատականք	65
Փառնէլեանք	6
Հակափառնէլեանք	29
Իռլանտացիք	35
Գործաւորական	2
Գումար յարդ ընտրելոց	372
Թիւ ընտրելի երեսփոխանաց	670
Կատարուած ընտրութիւնք	372
Մնացած ընտրութիւնք	298

Միութենականք չահեցան 54 տեղ. Ազատականք 10։

Ընտրուած են Պ. Կլատսթոնի որդի և նախորդ նախարար Պ. Հէրսկէրդ Կլատսթոն, որ վերընտրեցաւ Հակառակ միութենական Նորդհ գնդապետին. Պ. Սիտնէյ Պըքսդը, ազատական նախորդ խորհրդական, և Պ. Ճորճ Բրբզը, արտաքին գործոց նախարարութեան խորհրդական արդի Վարչութեան մէջ։

Այս տեղեկութիւններէ կ'երևի թէ ընտրութեանց բախտը կը շարունակէ ժպտիլ միացեալ Պահպանողականներուն ու Միութենական-Ազատականներուն, և կասպասենք ետ կը մնան բոլորովին։ Հետեւեալ հաշիւն ինքեան կը ներկայանայ.

Միութենականաց ցարդ շահած տեղերը	54
Ազատականաց » » »	10
Միութենականաց զուտ շահն Ազատականաց դէմ	44
Ազատականաց նախկին մեծամասնութիւնը	14
Միութենականաց ստացած մեծամասնութիւնը	30
Որ բուէարկութեան մէջ կը հաշուի	բուէ 6

Այսինքն՝ եթէ մնացեալ 298 տեղերը իրենց առջի տերերուն ձեռքը մնան, Լորա Սալզպրիի դահլիճը նոր երեսփոխանութեան մէջ կունենայ 60 բուէի մեծամասնութիւն։ Կը մնայ տեսնել թէ այս 298 տեղերը ինչպէս պիտի բաշխուին երկուց կուսակցութեանց մէջ։ Բայց Լորա Սալզպրիի դահլիճին յաղթութիւնն արդէն իսկ ապահովեալ կը թուի։

ԶՈՐՍ ՕՐՈՒԱՆ ՊԱՑԲՈՒՐԻՆ ԵՏԲԻՆ,

Ընտրութիւնք Լորա Սալզպրիի դահլիճին նպաստաւոր ելք տալ կը խոստանան։ Ինչպէս յայտնի է, Ընտրութիւնք անցեալ շաբաթ օր սկսան։ Շաբաթ օրուան անգլ. լրագիրք կը ծանուցանէին 35 անվէճ ընտրութիւնք, և կ'ըսէին թէ նոյն օրն իսկ (Շաբաթ) տեղի պիտի ունենար առաջին պաքարն երկուց կուսակցութեանց մէջ։ Շաբաթ, երկուշաբթի, երեքշաբթի և չորեքշաբթի կատարեցան 372 ընտրութիւնք, և ընտրուեցան 270 նախաբարականք և միայն 102 ընդդիմադիրք։ Թէպէտ հաւանական է որ չորեքշաբթիէն ետքը կատարելի ընտրութեանց մէջ աւելի իռլանտացիք և Ազատականք ընտրուին քան Միութենականք, բայց այս վերջինք արդէն այնքան ճամբայ առած են որ նպատակակէտին իրենք աւելի շուտ պիտի հասնին քան ընդդիմադիրները. դի եթէ մնացեալ 298 տեղերուն մէկ երրորդը միայն շահին Միութենականք, դարձեալ մեծամասնութիւն կ'ունենան նոր երեսփոխանութեան մէջ, և հաւանական է որ մէկ երրորդէն աւելի շահին։ Հետեւապէս, Ազատականաց պարտութիւնն անխուսափելի կը թուի։

* * *

Այս կարծիք զրեթէ ստուգութեան կը փոխուի երբ կը տեսնենք որ Միութենական նախարարներէն կամ կուսակցապետներէն ո՛չ ոք յաղթուեցաւ անձնապէս, մինչ Ազատականաց ամենէն պատկառելի պետը (Պ. Կլատսթոնէն ետքն որ չի մասնակցիր պարարին), այն է՝ Սրբ Ուիլիըմ Հարքորդ, չկրցաւ ընտրուիլ, որպէս անցեալ օր յայտնի կը հանեցինք Հեռագրաց բաժնին մէջ։ Հասարակաց կարծիքն զՍրբ Ուիլիըմ մասնակից կ'ընէր յաղթելու Լորա Ռոզպէրիի, և ճշմարտապէս ժառանգելու կուսակցութիւնը։ Սրբ Ուիլ. Հարքորդ իբրեւ Պ. Կլատսթոնի աջ բազուկը մասուցած ծառայութիւնները վերջերս պսակած էր՝ այնքան հանրօգուտ ելմտացոյցի ծրագիր մը ներկայացնելով և քուէարկել տալով որ ամէն ժողովրդական դասակարգերուն երեսսազգիտութեան վրայ իրաւունք ստացած կը կարծուէր։ Ան էր որ թեմեցուց աղքատ դասերուն վրայ ծանրացող տուրքերը՝ մեծագոյն հասոյթ մը քաղելով հարուստ ժառանգութիւններէն։ Այս բարեգործ տնօրէնութենէն եռքն առաջին առթիւ որ իւր ընտրողներուն կը ներկայանայ, անոնք ո՛չ միայն չեն վերընտրեր զինք այլ իրմէ նախամեծար կը համարին Պէվրդ անուն ո՛և իցէ պահպանողական մը, որոյ անունն առաջին անգամ կը լսենք։ Ի՞նչ ապերախտութիւն, պիտի ըսեն Ազատականք։ բայց երբ հանրային կարծիքը կուսակցութեան մը դէմ դառնայ, այսպիսի նախճիրներ կը գործուին իբրեւ հոսանքի մը բերմունք։ Իրաւ. Սրբ Ուիլիըմ Հարքորդ առանց ամոսի պիտի չմնայ։ Ըստ ընկալեալ սովորութեան, ընտրուած Ազատականներէն մին իւր տեղն անոր պիտի թողու, ինք հրաժարելով երեսփոխանութենէ։ Բայց թո՛ղ թէ Ազատականք առթիւ մը կրնասք պիտի կրեն գաղձնալ, ընտրութեանց սկիզբն իսկ իրենց կուսակցապետին յաղթութիւն անշուշտ աննպաստ տպաւորութիւն բրած է ընտրութեանց բովանդակ ընթացքին վրայ։ Թէ ընտրութիւնք Ազատականաց հակառակ ընթացք մ'ունին, այնու ևս յայտնի է որ 372 ընտրութիւնք կը կատարուին ու կը լմննան և դեռ միայն 65 կատարեալներնք կը յաղթուին ընտրուիլ։ Արդէն բաւական գիւղախմբեր ալ իրենց քուէները տուին, և կ'երևի թէ հոն ալ Ազատականք աւելի կը կորուսանեն քան կը շահին։

Յարգուած ականաւոր Ազատականաց մէջ յիշատակելի են նաև Իռլանտայի նախորդ նախարար Պ. Ճոն Մորլիի եղբայր Պ. Արնոլտ Մորլի, որ իբրեւ թղթատարական և հեռագրական նախարար՝ յաջող պաշտօնավարութիւն մ'ունեցած էր Լորա Ռոզպէրիի և Պ. Կլատսթոնի վերջին գահլիճներուն մէջ։ Յարգուած է նաև Սըր Հէնրի Բոսքօ, ազատական, անգլիական գիտութեան վառելիքէն մին, նշանաւոր տարրաբանը, զոր այլ եւս չուզեց Մանչէսդրի նման ազատամիտ քաղաք մը, որ հիմա Միութենականներուն կը ժպտի։ Գործաւորականք ևս անյաջող են այս ընտրութեան մէջ։ Անոնց պետն էր Պ. Բայր Հարտայ, որ չկրցաւ վերընտրուիլ Լոնտոնի գործաւորական մեծագոյն շրջանակին մէջ։ Լուծեալ երեսփ. ժողովոյն մէջ գործաւորական կուսակցութիւնն առաջին անգամ ըլլալով կարեւորութիւն ստացած էր։ 12 անդամ ունէր, որք Պ. Լաֆուշէրի և այլ մի քանի արմատականաց օգնութեամբ, աւելի քան 20 ձայնի ոյժ մը կը կազմէին երբ խնդիր ըլլար գործադուրդ դասակարգին օգտակար բան մը որոշելու։ Անգլիայի այս գործաւորական-խորհրդարանական կուսակցութիւն չտիաւոր ընթաք մը կը բռներ. բաւական խնամատարութիւն կը ցուցնէր, և կը կարծուէր թէ յառաջ պիտի երթայ։ Բայց թէպէտ քուէարկայ ընտրութիւնք արդէն մեծագոյն մասամբ կատարեցան, երկու գործաւորականք միայն կրցան ընտրուիլ։ Կ'երևի թէ Անգլիա ուժգին վերադարձ մը կ'ընէ չափաւոր-պահպանողականութեան, կամ կ'ընդդիմանէ այնպիսի պահպանողականութիւն մը որ չափաւորուած ըլլայ Տիվընշիրի դրսին և Պ. Զեմբրլէյնի ազատականութեան մնացորդներովը։

* *

Թէպէտ ընտրութիւնք ամսոյս 15/27ին պիտի վերջանան, բայց այսօրուընէ ներելի է ըսելիք Պ. Կլատսթոնի բացարձակ հրաժարումն հանրային կեանքէ՝ ամենամանր տեսակէն հարուած մը եղած է ազատական կուսակցութեան, որ կ'երևի թէ տարիներու կը կարօտի նորէն ինքզինք գտնելու համար։

ԻՏԱԼԻԱՅԻՆԵՐ ԵՒ ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐ

Վեհ. Վիրգորիա Թագուհւոյն հրաւէրով, Ճենովայի դուքսն և իտալեան նաւամարին զլխաւոր սպայք յատուկ կառախմբով և պաշտօնական կառքերով Ուինտսորի պալատը գացին, և պատիւ ունեցան ներկայանալու Ն. Վեհափառութեան, որ իւր սեղանն հրաւիրեց դուքսն ու դեսպանը։ Միւս սպայերն անգլ. գերդաստանի ուրիշ անդամներու և պալատականներու հետ մէկ տեղ ճաշեցին։

Այս ընդունելութենէ ետքը, Ն. Վեհափառութիւն հեռագիր գրելով Իտալիոյ Թագաւորին, իւր զոհունակութիւնն յայտնեց իտալեան նաւատորմին այցելութեան համար, և փափաք յայտնեց երկուց ժողովրդոց և երկուց նաւային զօրութեանց սիրալիր յարաբերութեան պահպանման։ Ուսմերդոյ Թագաւոր նոյն ոճով պատասխանեց, շնորհակալ ըլլալով Անգլիոյ մէջ իւր նաւագներուն եղած սիրալիր ընդունելութեան համար։

Կալլէսի իշխանն աչքէ անցուց իտալեան նաւախումբն և զայն ընդունող Մանչի անգլ. նաւատորմն։ Իշխանն Օպոզն արքայական զբօսանուն էր. Ճենովայի դրքսին հետ մէկտեղ։ Իտալեան իւրաքանչիւր մարտանաւ՝ երբ Օպոզն իւր առջևէն անցնէր, թնդանօթից արձակմամբ կ'ողջունէր զայն, և Օպոզն իւրաքանչիւր անգամուն թնդանօթի արձակմամբ կը փոխարինէր ողջոյնն։ Անգլ. զբօսանուն իւր մեծ կայմին վրայ քաշած էր անգլ. դրօշն, և հաւեր կայմին վրայ՝ իտալականը։ Ռէ Ո–մպերդօ իտալեան մեծագոյն զրահաւորին առիւ հանելուն, խարխս նետեց, և արքունի երկոյին մարտանաւ նշաններ փոխանակեցին։ Կալլէսի իշխանը, Ճենովայի դքսին հետ մէկ տեղ. Ռէ Ո–մպերդօ զրահաւորն ելաւ և Աչինի ծովակալին կողմէ ընդունուեցաւ։ Այն տեղն նաւամարտի փորձ մը եղաւ, ընդ մէջ Թորփիլոնաւերու և առաջնակարգ մարտանաւերու։ Ռազմափարձէն ետքը իշխանն և դուքսը գարձան Օպոզն։ Ցետոյ երկուքը մէկէն ճաշեցին Սաֆոյա իտալեան զրահաւորին մէջ։ Բարդմաութի քաղաքային խորհուրդը փառաւոր ճաշ մը տուաւ Ճենովայի դքսին և իտալեան նաւախմբին գլխաւոր սպայներուն։

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՄԱՐՔՐ

Ինչպէս Հեռագրերէն ալ երևցաւ արդէն, Գերմանիա կտրուկ ընթացք մը բռնեց Մարքրի դէմ։ Կոմս Դաթէնպարգ, գերման դեսպան ի Թանճէր, վերջնագիր մը մատուցց, և գերմանական չորս մարտանաւեկան շարաւեցան Մարքրի ծովեզերեայ մայրաքաղաքին առջեւ։ (Մարքր, Ռուսիոյ նման, երկու մայրաքաղաք ունի։ Մին ծովեզերեայ, Թանճէր։ Միւսն ալ, Ֆէս, երկրին ներսն է։ Ի հարկին երեք կ'ըլլայ, երբ վեհապետը Մարքէշ նստի։) Նախորդ վեհապետ Մուլա Հասանի մահէն ի վեր, Մարքի շփոթ կացութեան մը մէջ ըլլալը լրագրոց ընթերցողներուն ծանօթ է։ Քանի մը ցեղեր, որք արդէն երբեք հնազանդ չեն բոլորովին, իրենց վրայ հուժկու ձեռք չդպցուով, իրենց մեծերն սպանեցին և ըմբոստացան։ Կարաւանները բացարձակապէս անապահով վիճակի մը մատնեցան։ Անկարգութիւնք սովորաբար ներսերը կ'ըլլային։ Վերջերս ծովեզերաց մօտ ալ անկարգութիւնք եղան։ Սուրհանդակներ կողոպտուեցան։ Քաղաքացիներ ոչ շատ հեռի, զարնուեցաւ և մեռաւ Պ. Նէյսման գերման վաճառականը։ Մինչ այս ինդիր չէր գոցուած, և ահա ուրիշ գերման մը, Պ. Ռոբզրոհ, Սաֆիի հիւսիսային կողմը, գիւղի մը մէջ, քնացած պահուն սպանեցաւ տեղացիներէն, որք իւր բերած ապրանքը կողոպտեցին ու փախան։ Այս գերման այն բաղ տրաբախօսներէն էր զոր Համպուրկի գործարանք կը գործածեն՝ իրենց ապրանքները քշելու համար Ափրիկէի ներսերը։ Մարգական կերթար, իրեն հետ ունենալով միայն ուղտապան և մի քանի ընկի սպասաւորներ։ Սարքի գժամակեցաւ կատաղում ընել, յայտարարելով թէ օտարազգիներուն ապահովութեան համար պատասխանատու չէ երբ անոնք ներսերը կը ճամբորդեն առանց իրենց հետ զինուոր պահակներ առնելու, իբրեւ ներկայացուցիչ Մարքրեան իշխանութեան։ Բայց Տէրութիւնը չեն ընդունիր որ ճամբորդ մը հետը զինուորներ չառնելուն համար կրնայ սպանուիլ։ Պ. Ռոբզրոհ, կա՛մ իւր վրայ վստահ ըլլալուն և կամ պարտաւ ծախքի տակ մտնել չուզելուն, գինուորական հետեւորդներ առնուլ աւելորդ դատած էր։ Դեսպանը, տեսնելով որ Սաֆիի գերմանական գերհիւպատոսին միջնացու տեղւոյն կառավարչէն գոհացում ստանալ անկարելի է, ինք անձամբ հոն գնաց Ալէքսանդրէն մարտանաւով, և իշեն հետ ցամաք հանեց գերման նաւագներու զօրախումբ մը, իւր ապահովութեան համար, ականջ չկախելով Մարքրեան իշխանութեանց դիտողութեան, որք կ'ուզեն թէ իրենք երաշխաւոր են իւր ապահովութեան համար։ Մարքսասպանք չբռնուեցան, հակառակ դեսպանին պահանջումներուն։ Դեսպանը տեղւոյն պաշտօնեայները պատասխանատու կը ճանչէ մարդասպաններուն չբռնուելուն համար. դի անծանօթ մարդիկ չեին խնդմ գերման ճամբորդը վտանգաւոր սպանողները։ Զէ բռնուած նոյն իսկ Թիպի Թիպի, այն գիւղապետ որոյ գիւղին մէջ սպանած էին գերմանացին։ Դեսպանն ո՛չ միայն մարդասպաններուն բռնուին և պատժուիլը կը պահանջէ, այլև 8,000 անգլ. ոսկի՝ գերմանացւոյն ընտանիքին համար։ Կը կարծուի թէ չորս մարտանաւերու Թանճէրի առջև հանդիսաւոր վրայ, Մարքի կառավարութիւնը պաշտօնական պիտի ընէ Սաֆիի կառավարիչն, և միւս գոհացումներն ալ պիտի տայ. մանաւանդ որ Պ. Ռոբզրոհի սպանումէն ետքը նոյն տիսուր ճակատագրին ունեցաւ նա և գերմանական պաշտպանութեան ներքև գտնուող Մարքրի մը։ Ինչպէս յայտնի է, Գերմանիա մինակ չէ. դի հոլանտական մարտանաւ մ'ալ եկած է՝ գոհացում պահանջելու հոլանտական առագաստանաւ մը մարքրի ծովահէններու կողմէ ցամաք ձգուելուն ու կողոպտուելուն համար։

ՀԱՊԷՇԻ Ի ՌՈՒՍԻԱ.— Թեղերսպուրգի մետրոպոլիտն հոգեւորաց տուաւ ի պատիւ Հապէշ պատգամաւորութեան, և այս առթիւ երկարօրէն խօսեցաւ Ռուսիոյ և Հապէշաստանի Եկեղեցեաց մէջ միութեան մը օգուտներուն վրայ։ Բաւական թէ այս միութիւն զլուրաւ ի գործ կը դրուի եթէ Հապէշք աւելի յաճախ այցելեն Ռուսիա և իրենց տղաքը ղրկեն կրթուելու ռուսական եկեղեցական ակադեմիաներուն մէջ։ Մետրոպոլիտը շատ մը սուրբ պատկերներ նուիրեց Հապէշներուն, որոց մէջ հատ մը կայ թանկագին քարերով զարդարուած յատկապէս Հապէշաստանի թագուհւոյն համար։ Օրթոդոքս Եկեղեցւոյ ժամագիրքեր և կրօնագիտութեան գիրքեր անոնց նուիրեց ճոխապէս կազմուած։ Ռուսիոյ Սինոդին ատագ Պրոկուրոր Պ. Բոպիէտոնոսցեւ ալ այցելով Հապէշ պատգամաւորութեան, երկարօրէն խօսեցաւ ռուսական և հապէշական Եկեղեցեաց միջև հաստատելի սերտ միութեան վրայ։

ՕՏԱՐ ՄԱՄՈՒՆ Ի ՖՐԱՆՍԱ.—Ֆրանսայի Երեսփ. Ժողովն օրէնք մը քուէարկեց, որուն համեմատ կառավարութիւնն իրաւունք կ'ունենայ խափանելու Ֆրանսայի մէջ օտար լեզուաց հրատարակուած ամեն լրագիր։ Այս օրէնք յատկապէս դրուեցաւ՝ կառավարութեան իշխանութիւն տալու համար որ կարենայ խափանել Նիս քաղաքին մէջ Ֆրանսական հպատակներու ձեռամբ և խմբերէն լեցուաւ հրատարակուած Բէնոպէրօ լրագիրն, որ կը ջատագովէ Նիսի և Սաւոյայի վերադարձն յիտալիա, յորմէ բարեհամբաւ առնուեցաւ Նաբոլէոն Գ.ի օրով, երբ Ֆրանսայի օգնութեամբ Իտալիա յաղթեց Աւտրիացիներուն։ Ի Փարիզ հրատարակեալ կոլիմանիա Մէնէնճը լրագիրն և Նը–Եորք Հերըլդի Փարիզեան տպագրութիւնը Ֆրանսական կառավարութեան շնորհով միայն պիտի կրնան չարունակուիլ այսուհետեւ։

Օտար լրագիրք դիտել կուտան թէ Ֆրանսական այս նոր օրէնք, որ հակառակ է Ֆրանսական հռչակեալ սկզբանց, կրնայ օր մը Ֆրանսայի դէմ գործածուիլ. դի Ալզաս-Լոռէնի և Հռոմի մէջ Ֆրանսերէն թերթեր կը հրատարակուին՝ ոչ-Ֆրանսական իշխանութեանց ներքեւ։

ՔԻԼԻ ԶՐԱՆՑԸ.—Պաշտօնական յայտարարութիւն մը կը ծանուցանէ թէ այսուհետեւ Քիլի Զրանցէն կրնան անցնիլ այն նաւեր որք Լուրին մէջ վեց մէգրէ աւելի խորութիւն չունին։ Ընկղմած դանիական նաւը դեռ չհանուեցաւ։ Բայց անցուդարձն հիմա կարելի է։

ԻՌԼԱՆՏԱՑԻ կաթոլիկ արքեպիսկոպոսն Տ. Ուոլշ հովուական գիր մը հանելով, յորդորից իռլանտական ամէն կուսակցութիւններն իրենց մէջէն վանելու գժտութեան ոգին, և միասիրտ միաբան մասնակցելու ընտրութեանց, եթէ ազէտ մը բերել չեն ուզեր իրենց ժողովրդին գլխուն։

Պ. ՄԻԱՄՊՈՒԼՈՒԻ ՄԱՀՆ.—Հեռագիրը կը ծանուցանէ թէ Պ. Սպամպուլով մեռաւ հինգշաբթի գիշեր ժամ 7½ին։ Թրնովա ծնած էր, 1853ին։ Նախ եկեղեցական ասպարէզին պատրաստուելով, աստուածաբանութիւն սորվեցաւ Օտեսայի մեծ կղերանոցին մէջ։ Իւր ուսումը առած միջոցին էր որ 1875ին Պուլկարիա դարձաւ, և անտի Պուքրէշ անցաւ։ Ապա հանրային գործերու մէջ մտնելով՝ կարեւոր տեղ մը բռնեց։ Ալէքսանդր իշխանին հրաժարելէն ետքը, Քարավէլովի և Մուդքուրովի հետ երկրին խնամակալ կարգուեցաւ։ Ցետոյ երկրին վարչական ոստիկան մը եղաւ, և այս պաշտօնը չարունակեց մինչև անցեալ տարի, երբ իրեն յաջորդեց Պ. Սդոյլով։ Ամուսնացած էր Մուդքուրովի գնդապետին քրոջ հետ։ Կրթուած բնաւորութեան տէր, գործունեայ, ճարպիկ, խորախորհուրդ վարչագէտ մ'էր, որուն շատ բան կը պարտի պուլկարական իշխանապետութիւնն։ Երբ անոր վրայ վիրաբուժական գործողութիւն մը պիտի կատարուէր, Ֆերտինանտ իշխան, իւր մայր և իւր կին Քարլսպատէ հեռագրեր քաշելով անոր առողջական վիճակին վրայ հարցումներ ընելու մեծ հոգածութեամբ։ Պ. Սդամպուլով իւր երիտասարդութեան կ. Պոլիս եւս գտնուած էր։ Սպարանէին մէջ, իբրև առնեաքան, թէև առատախօս չէր, բայց իւր կարուկ պարբերութիւնք չեշտակի կը զարնէին խնդրոյն էական կէտին։ Թէև բաւական ժամանակէ ի վեր գործէ քաշուած էր՝ Ֆերտինանտ իշխանին հետ անհամաձայն ըլլալուն համար, բայց հակառակ կուսակցութիւնը չէր գաղրած զինք քննադատելէ։

ՀԵՌԱԳԻՐ

ՓԵԳԵՐՍԳՈՒՐԳ, 17 յուլիս.— Այսօր Տ. Բէյման եպիսկոպոսն և Պուլկար պատգամաւորութեան միւս անդամները Փեթերոֆի պալատին մէջ Զարին ներկայացան։ Պուլկար պատգամաւորութիւնը շաբաթ օր պիտի մեկնի Մոսկուա-Բէյվի ճամբով։ Ռուսական Սինոդի Պրոկորոր Պ. Բոպիէտոնոսցեւ սեղան մը տուաւ, որուն ներկայ գտնուեցան Տ. Բէյման եպիսկոպոսն, Տ. Վասիլի և հապէշական պատգամաւորութեան անդամները։

ՓՈՒՐԻԶ.— Բերուի կառավարութիւնն ընդունեց իրաւաբարութեան մը յանձնել Պուլիվոյ հետ վէճին կարգադրութիւնը։

ՀՌՈՄ.— Մերակոյսը 28ի դէմ 87 քուէով ընդունեց սեպտեմբեր 20ի օրն ազգային տօն հռչակելու օրէնքը, զոր քուէարկած էր Երեսփոխանական Ժողովը։

ԱԶԳԱՅԻՆ

ԼՈՒՐԵՐ

Առաջիկայ կիրակի օր, Վարդավառ, Իւսկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյ տօնախմբութեան առթիւ, Աժեն. Ս. Պատրիարք Հայրը հանդիսաւոր Պատարագ պիտի մատուցանէ նոյն եկեղեցւոյն մէջ։

Ն. Աժենապատուութիւն այսօրուընէ Իւսկիւտար կերթայ, ուր պիտի մնայ մինչև երեքշաբթի։

Քաղաքական ժողովը իր չորեքշաբթի օրուան նիստին մէջ զբաղեցաւ կարգ մը յարաբերական խնդիրներով և ի միջի այլոց հետեւեալները տնօրինեց։

Ռումելի Հիսարի թաղական խորհրդոյ ընտրութիւնը կատարուած է ընտրողական ժողովին կողմէն տեղեկագիրը ներկայացուած ըլլալով, վաւերացուց սոյն ընտրութիւնը, սակայն նորընտիր անդամներէն մին հրաժարած ըլլալով, ժողովը հրահանգ տուաւ անոր տեղ ընտրութիւն կատարելու։

Նոյնպէս Գուզկունճուգ և Իճատիէ միացեալ թաղերուն թաղական խորհրդոյ ընտրութիւնը օրինաւոր կատարուած և տեղեկագիրը հաղորդուած էր։

Ժողովը ստուգիչ եռք կատարուած ընտրութեան օրինաւորութիւնը, հաստատեց նորընտիր թաղական խորհրդոյ պաշտօնը։

Հ. Մանուէլ վարդապետ Քալֆունի, բազմահմտաւ Մխիթարեանը, որ երկու ամսէ հետէ մայրաքաղաքս կը գտնուէր օգափոխութեան համար, երէկ իրիկուն մեկնեցաւ ի Վենետիկ։

Նամակագիր մը կիմացունէ մեզ թէ Պ. Նազարէթ Գ. Տէրտէրեան որ բժշկական տոքթորի վկայական ստացած է Ամերիկայի Հօրթվէսթրբն համալսարանէն, բնիկ Պոլսեցի չէ, ինչպէս գրուած էր Շիքագոյի թղթակցութեան մէջ, այլ Սրվաղի Խառոխան գիւղի բնակիչներէն Գէորգ աղա Տէրտէրեանի որդին, և ինքն ալ այդ գիւղի մէջ ծնած։

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Հանգուցեալ Տիկին Յուստինէ Զարուբեանի յուղարկաւորութեան առթիւ փոխան ծաղկեփունջի՝ Մեծ. Սարգիս էֆ. Թաշճեան 108 զրշ. նուիրած է ի նպաստ հաստատութեանս։ (Կնիք)

Այրի տիկին Նուարդ Գ. Մաքուլեան և զաւակունք հնորհակալութիւն կը յայտնեն ամէն անոնց որ հաճեցան ներկայ գտնուիլ հանգուցեալ ԳԷՈՐԳ ԷՖ. ՄԱԳՈՒԼԵԱՆի յուղարկաւորութեան ու թաղման, և իրենց ցաւակցական զգացմանց հաւաստիքը տուին այս տխուր առթիւ։

ԱԶԳ. ԿԵՂՐ. ՎԱՐԺԱՐԱՆ

Տասնեքրորդ պարբերջեան

1895 — 1896

Ազգ. Կեղր. Վարժարանի տասներորդ Տարեշրջանը պիտի սկսի յառաջիկայ սեպ. 1էն։ Աշակերտիլ փափաքողներ կրնան վարժարան ներկայանալ իրենց ծնողաց կամ պաշտպանին հետ, ՄԻԼՍԷԻ ԳԻՒՍՏՈՒ 21, ամեն օր մինչեւ կէս օր, եւ անուններնին արձանագրել տալով հոն՝ տեղեկութիւն ստանալ մտից ձեւակերպութեանց ու քննութեանց մասին։ 2—13

Հիորին չուրքեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.—Խարբերդի Նահանգին Ագչէ Տաղ գաւառակին գայմագամ անուանեցաւ Հիւսնիմանսուրի գայմագամ Բաֆֆ էֆէնտի, որուն յաջորդեց Ագչէ Տաղի գայմագամ Աբքզի էֆէնտի։

Սամսունի Նախպ անուանեցաւ Սըզերդի նախորդ Նախպ Ֆազրլ էֆէնտի։

Զորրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Հնդիկ ակնաբոյժ Նէվսալ Ալի խանի։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՒՄ.—Յուլիս 5 Թուականաւ Բարձ. Մեծ-Եպարքոսին ուղղեալ հեռագրեր ծանուցած են թէ Երզրումի, Տրապիզոնի, Խարբերդի, Սըվազի, Հալէպի, Պիթլիսի, Պէրութի, Առանի, Վանայ, Տիարպէքիրի և Էնկիւրիի նահանգաց ու Ճիտտէի մէջ ալ, շնորհիւ Վեհ. Սուլթանին, կատարեալ անդորրութիւն և ապահովութիւն կը տիրէ։

ԵԳԻՊՏՈՍԻ Խտիվ Բարձր. Ապպաս Հիլմի փաշա երէկ առաւօտ ժամ 1 ին մայրաքաղաքս ժամանեց Մահրոսէլ զբօսանաւով, որուն կը հետեւէր Սաֆա-Էլ-Պահր չոգենաւը։ Մահրոսէն Տոլմա Պաղչէի առջեւ կեցաւ։ Մոլորեալ նախարարութեան մէկ չոգենաւակն, որուն մէջ կը գտնուէին պալատական բարձրաստիճան պաշտօնատարներ, մօտեցաւ զբօսանաւին։ Պաշտօնատարք Մահրոսէն հինելով բարի գալուստ մաղթեցին Ն. Բարձրութեան, որ քիչ յետոյ իր հետեւորդաց հետ նոյն չոգենաւակով Տոլմա Պաղչէ եկաւ և անտի պալատական կառքերով կայս. պալատ գնաց։

Վեհ. Սուլթանին կողմէ շնորհեալ արտօնութեամբ, Ապպաս փաշա պատիւ ունեցաւ Ն. Կ. Վեհափառութեան ներկայանալու եւ իր հաւատարմական զգացմանց հաւաստին մատոյց յոտս կայս. գահոյիցն։ Ապպաս փաշա կայս. պալատէն ելնելով գնաց իր ծովային ազարանքն ի Պէպէր։ Մահրոսէ և Սաֆա Էլ Պահր չոգենաւերը Պէպէրի առջեւ խարիսխ նետեցին։

Պալատական կառքեր և չոգենաւակ մը Ն. Բարձրութեան տրամադրութեանը տակ դրուած են։

Եգիպտոսի խտիվութեան կ. Պոլսոյ գործակատար Մահմուտ պէյ յատուկ չոգենաւով մինչեւ Տարտանել գնաց ընդ առաջ Խտիվին և Մահրոսէ չոգենաւով մայրաքաղաք դարձաւ։

ՕԼԿԱ ԹԱԳՈՒՀԻՆ.—Ինչպէս ծանուցինք Յունիսի Օլկա Թագուհին երէկ առաւօտ Վոսփորէն անցնելով Օտեսա գնաց Սֆոֆրիէրիա զբօսանաւով, որ Եէնիգիւղի առջեւ կեցաւ։

